



## Ա. ՀԱՇԻՑՅԱՆ

### Ա. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱՎԻ ՀԱՅՐԱՊԵՏ (1101—1173)

#### Ն Ա Խ Ա Բ Ա Շ

Այս տարի, օգոստոսի 18-ին, լրանում է ս. Ներսես Շնորհավու մահվան 800-ամյակը։ Հիշարժան այս հորելլյանի առթիվ գրած 1973 թվականի հունվար 18 թվակիր սըրբատառ իր կոնդակում Հայոց Հայրապետը, նշելով ԺԲ դարում հայ եկեղեցու տարեգրության և ընդհանրապետության մեր մշակույթի պատմության մեջ եռամենք վարդապետի և սուրբ Հայրապետի պատմական դերն ու տեղը, գրում էր. «Առանց Ներսես Շնորհալու լուսաշող ներկայության, պիտի մերկանար Կիլիկյան ԺԲ դարը իր փառքից և պիտի անեանար մի անկրկնելի, շողարձակ բարձունք մեր մշակույթի պատմության հորիզոնից։ Երանաշնորհ ս. Շնորհալին փառավորվել է անցյալում և փառավորվելու է միշտ, իբրև բոլոր ժամանակների պարձանք ամենայն հայոց»։

Հայրապետական սույն կոնդակը միաժամանակ 1978 թվականը հայտարարելով հորելլյանական տարի, հարահանգում էր մեծաշուրջ հանդիսություններով, գրական-գիտական ուսումնասիրություններով ոգեկոչել պաշտելի անունը, խնկելի հիշատակն ու մատենագրական փառավոր վաստակը մեծագործ Հայրապետի Հայոց։

Մայր Աթոռում, Ն. Ս. Օծության բարձր հովանավորության ներքո, կազմվել է հորելլյանական հանձնաժողով, որի պարտականությունն է եկեղեցական ու հորելլյանա-

<sup>1</sup> «Էջմիածին» ամսագիր, 1973, հունվար, էջ 4:

կան հանդիսությունների կազմակերպումն ու անցկացումը ս. Էջմիածնում։

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը ս. Ներսես Շնորհալու հիշատակին, կյանքին ու գործունեությանը նվիրելու է բացառիկ ու բովանդակալից հորելլյանական մի համար, որի աշխատակցությանն են հրավիրված մեր բարձրաստիճան հոգևորականները։

Մայր Աթոռի՝ Հայաստանաց եկեղեցու Միջնեղեցական հարաբերությունների բաժինը օտար լեզով հրատարակության է պատրաստում ս. Ներսես Շնորհալու կյանքին ու գործին նվիրված մի ուսումնասիրություն՝ քոյլ եկեղեցիներին ծանոթացնելու համար հայ եկեղեցու մեծ վարդապետի ու Հայրապետի վաստակը։

ԺԱ. դարում սեղով թուրքերի հարվածների տակ բուն Հայաստանում միմյանց եռևից կործանվում են հայկական իշխանությունները։

Հոյները տիրում են Վասպորականին և Ս. Անիի թագավորությանը։

Ցրվում է հայությունը՝ «զորս ոչ սուր սատակեաց, ցրուեցան օքէն աստեղաց մոլորական կոչեցելոց»<sup>2</sup>։

«Ո՞հ, քանի դառն է պատմութիւնս... և ողբոց արծանի...» ոչ մի օր «կամ միոյ ժամանակի հանդիսացաք անդրութեան... աշխարհ ամենայն ի խաղաղութեան բնակէ,

<sup>2</sup> Պատմութիւն Արիստակիաց վարդապետի Լատիվիացուց, Թիֆլիս, 1912, Ա, էջ 2:

իսկ մեք գերիք, կալանառորք, սրակոտորք, ընչից կողոպտած տնառերք, անթագառը, անշխան, անտերունչ, ըստ հոգոյ և ըստ մարմնոյ...»<sup>3</sup>:

Հունաց կայսրը «ընդ կողմանս աշխարհին [հայոց] զօրս առաքէ, ասպատակ արձակէ, պատուէր տայ մեծասաստ հրամանա՝ մի՛ ողորմի ծերոյն և մի՛ երիտասարդին, մի՛ տղային և մի՛ հասակա կատարելոյն, մի՛ առն և մի՛ կնոջ և մի՛ ամեննին ամենաց հասակի»<sup>4</sup>:

Կայսերական հրամանով ասպատակվում և քանդվում են հայկական 12 գավառներ և ավար են գնում «տանեն Յունաց... այսու ձեռնարկութեամբ քանդեալ ապականէ գաւառն երկոտասան... յորս էր տեսանել տեսութիւն ողորմելի ո քազում արտասուաց արժանի, քանզի քարձրածեղոյն ապարանք արքունական տաճարաց՝ որք մեծամեծ ծախիք և հնարագիտութեամբ ճարտարաց ի սքանչան տեսողաց և ի վայելս ուրախութեան բնակողացն շինեալ էին, հրայրեացք անկեալ կործանեցան և որք նոցին տեարքն՝ առնին սրակոտորք»<sup>5</sup>:

Հայրենասեր պատմիչը սրտի աննկարագրելի մորմորով է գրում, որ սեղուկյան և հունական ասպատակությունների պատճառով «մարդաբնակ աշխարհն հայոց թափուր ի բնակչաց»... և ամեն ինչ հայ ծողովրդի համար «յորդս փոխեցա... և ենաւ կատարած կենաց տանս հայոց» (Ժ 51):

Սրբատակես Լաստիվերցին իր պատմությունը հասցրել է մինչև 1072 թվականը, Ալիքալանի մահը:

#### Ս. Ներսէ Շնորհալու կյանքն ու գործունեությունը

ԺԱ. դարում, երբ բուն Հայաստանում սեղուկյան արշավանքների և հունական ասպատակությունների պատճառով մի մեծ ու մոպջ խավար իշել էր մեր հոգոնոր ու մտավոր կանքի վրա, հայաստանքներից և արշավանքներից քված ու հեռացած բուն հայաստանցի հայ իշխաններ՝ իրենց մարդկանցով և ծողովրդական բազմություններ դիմում էին դեպի Արևմտուր և ստու-տեղ լինում Փոքր Սսիհայում, Կիլիկիայում, Տավրոսան լեռների վրա, Միջագետքում, Ասորիքում և «Եփրատացոց» աշխարհում Եփրատ գետից արևմտուր:

Հայ գաղթական իշխաններից շատերն իրենց նոր բնակավայրերում, շրջապատված անհամեմատ ուժեղ թշնամիներով, կազմում

<sup>3</sup> Անը, Ժ, Լշ 111:

<sup>4</sup> Անը, Բ, Լշ 13:

<sup>5</sup> Անը, Լշ 14:

էին անկախ կամ կիսանկախ փոքր իշխանություններ և իրենց անկախությունը՝ պահում՝ հերոսական պայքար մղեղով հովհերի, թուրքերի, մամլուքների և խաչակիր կաթողիկ իշխանների դեմ:

Անա պայմանի վարաբնոյի իշխաններից մեկն է եղել նաև Ներսէս Շնորհալու պապը Ապիրատ անունով պահլավոնի իշխանը, Գրիգոր Մագիստրոս գիտնական ու հայտենասեր իշխանի չորրորդ դատեր ամսանը: Շնորհալու և պապը, և հայրը կոչվել են Ապիրատ:

Շնորհալու հայրը՝ պահլավոնի Ապիրատ իշխանը, տերն էր Ծովք դղյակի, Տլուք գավառում, Պեհեննի մոտ, Այնթապից դեպի հյուսիս-արևմուտք, Մարաշից դեպի արեւելք, Սև լեռան շղթայի ճյուղերից մեջի մեջ, մի բրգածն քարածար և քարակարկան գագաթի վրա, ամեն կողմից սեպացած, ինչպես նշում են Հ. Ղ. Ալիշանն՝ ու Բարգեն ծ. վրդ. Կյուլեսերյանը<sup>6</sup>: Անա Ծովք դղյակում 1101 թվականին ծնվում է ապագա Ներսէս Շնորհալին:

Պահլավոնի իշխանները համարվում են, ըստ պատմական տվյալների, և Գրիգոր Լուսավորչի տոհմից: Շնորհալին որդեմն սերում է պահլավոնների տոհմից:

Ե դարից հետո պահլավոնները դարձյալ մեծ դեր են կատարում իրենց նայրենավեր ու մշակութային գործունեությամբ մանավանդ բագրատունների օրով:

ԺՄ. դարի սկզբներից այս տոհմից նշանավոր են հանդիսանում Վասակ իշխանը, Գրիգոր Մագիստրոսի հայրը, Վասակի եղբայրը՝ Անիում հայոց սպարապետ Վահրամ Պահլավոննին, միջնադարի մեր պատճառության տաղանդավոր գինվորական դեմքերից մեջը, և ապա նույն ինքը Գրիգոր Մագիստրոսը, որը նույն հաջողությամբ գործածել է և սուրբ, և գրիչը:

Գրիգոր Մագիստրոս իշխանի որդին էր Վահրամ իշխանը, ապագա Գրիգոր Բ Վկայական կաթողիկոսը, որը գահակալեց 1065—1105 թվականներին: Վկայական կաթողիկությամբ սկսվեց հայ եկեղեցու պատմության մեջ, շուրջ 150 տարի տևող պահլավոնի կաթողիկուների ժամանակական իշխանությունը հայրապետական գանի վրա, 1065—1221 թվականներին, մինչև Կոստանդնուպոլիս Ա Բարձրաքերցու օրը (1221—1267):

Ներսէս Շնորհալին որդեմն Գրիգոր Բ Վկայական կաթողիկոսի բրոջ թոռն էր:

<sup>6</sup> Շնորհալի և պարագան խր, Վենետիկ, 1873, էջ 96, 151, 189, 310:

<sup>7</sup> Ծովք, Ծովք-Տրուք և Հոռոմ-Կրա, Վիեննա, 1904, էջ 28, 71:

Վկայասերը մեր եկեղեցական պատմության և մշակույթի տարեգրության մեծագույն դեմքերից մեկն է, որով սկիզբ է առնում մեր արծաթե դարը: Նա կրթվեց և դաստիարակվեց իր գիտնական հոր խամացի տակ և հանդիսացավ «այր քաջալիր», ամենայն հմտութեանց հետևեալ, և բովանդակ հասեալ ի վերա Հին և Նոր Կոտակարանցն Աստուծոյ, որ ընդ իմաստաէրն ասուր ի յամպիոն ի մէջ սրբոյն Սոփիի և յօսուր ընդ վարդապետացն Հոռոմոց և ի կարգի վարդապետացն էր յաղագ հայոց»<sup>8</sup>:

Վկայասերին համարել են եկեղեցական-կրթական հայրենանմեր իր գործութեան համար «Երկրորդ Մեռուայց», «սին հաւատոյ Հայուստանեայց» և «պարհաս սրբոց եկեղեցեաց Տաճն Արևելից»<sup>9</sup>:

Ընորհապու հայոր հերոսաբար ընկալ թշնամիների դեմ իր դրակը պաշտպանելիս 1103 թվականին: Ասյիրատը թողեց չորս զավակներ. Վասիլ, Գրիգոր, Ներսես և Շահնա:

Վկայասերն իր խնամքի տակ վերցրեց իր քրոջ թոռներին, մանավանդ Գրիգորին և Ներսեսին, և նրանց անհրաժեշտ կրթություն շամեց Քետունի Կարմիր կամ Ծուլի վանքում, որ հաստատել էր հայրապետական իր Աթոռը և կտակեց, որ Գրիգորը, մինչ այդ 12 տարեկան, պատրաստվի ու դաստիարակվի որպես ապագա կաթողիկոս: Այդպես էլ եղավ:

Վկայասերը դրանով ապահովում էր հայ եկեղեցու և հայրապետական Աթոռի անկախությունն ու իշքանությունն ըստզանդական ուննագություններից: 1105 թվին Վկայասերը մահացավ: Գրիգորի և Ներսեսի կրթության խնամքը ստանձնեց Բարսեղ Ա Անեցի կայտողիկոսը, Վկայասերի մյուս քրոջ որդիին:

1113 թվականին, Բարսեղ Անեցու մահից հետո, Ծուլի Կարմիր վանքում գումարված ազգային-եկեղեցական ծողովը, օրինականություն տալով Վկայասերի կտակին, 20 տարեկան հասակում «հոգելից և բազմաշնորհ, բարձրահասակ և գեղեցկատեսիլ»<sup>10</sup> Գրիգորի՝ Ընորհապու մեծ ներորը, ընտրությամբ կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունի անունով: Գրիգոր Գ Պահլա-

<sup>8</sup> Սատրելու Ութայեցի, Պատմութիւն..., Վաղարշապատ, 1898, էջ 220:

<sup>9</sup> Ներսիսի Ընորհալոյ, Բանք շափա, Վեհանիլ, 1830, էջ 546:

<sup>10</sup> Մ. արքապ. Օրմանյան, «Ազգապատում». Ա, Բերդով, 1959, էջ 1330:

<sup>11</sup> Մ. Ութայեցի, անդ, էջ 412:

վլոնին էլ արծաթի դարի մեր հշանավոր մատենագիրներից մեկն է:

Ընորհապին հիմնական իր կրթությունը ստանում է Ծուլի Կարմիր վանքում, Սուելի վանու Մանուկ կոչված գիտնական մեծ վարդապետի ձեռքի տակ, որ և մնում է մինչև իր 17 տարեկան հասակը, երբ հայրապետական Աթոռը և վանական դպրոցը փոխադրվում են Ծովք:

Ընորհապին ուսումնաւեր լինելով, շատ է ցանկացել բարձրանալ իրն գիտնական, բայց ժամանակի շփոթ կացությունը խանգարել է նրան հասնել իր հպատակին:

Այս մասին հայ վշտով գրում է, որ իր ժամանակ չկային հայոց երբեմնի հոչակավոր վարդապետարանները, իրենց «ծովամատուցույթ»... որով ինքը

«Զի հրահանգաց վարժարանի  
Չեմ տակաւին ներկուոր բանի,  
Յաթենականըն քաղաքի  
Չանձն իմաստիք ոչ կրթեցի,  
Ուր լսարանըն Պղատոնի,  
Եւ չափ ոտիկը Հոմերովնի,  
Ուր ստորոգողն Արիստոտէլ  
Տասըն բանի գըրողն էր...  
Ուր հոյցը ամէն հրուտորի,  
Ժողովարան ճարտասանի,  
Ներ հըմտութիւն Քերականի...  
Բայի քերումըն քերթողի...»<sup>12</sup>:

Արդարն, սելջուկյան արշավանքները քայլաբար էին նաև բուն Հայատանում մեր հշանավոր վանքերն ու վարդապետարանները: Ընորհապին վշտով գրում է. «Ուր մեր վարժարանը ի թագաւորական պատրաստեալ հրամանաց»<sup>13</sup>: Ազգային-քաղաքական իշխանության հետ վերացել էին մեր վանքերը և կրթության օջախները բուն Հայատանում և մեր հշանավոր վարդապետներից շատերը, ինչպես Ստեփանոս Մանուկը, զարթել էին Կիլիկիա, ուր նորաշեն վանքեր էին հիմնում և շարունակում իրենց կրթական-լուսավորական գործությունները:

Ծուլի Կարմիր վանքը, սակայն, եղավ Ընորհապու համար իր ցանկացած «Ճիշտականաց», «Երկրորդ Աթէնք», իսկ Հոմերոսին, Արիստոտելին, Պղատոնին եկան փոխարինելու մեր եկեղեցու մեծ մատենագիրները, ժամանակի հշանավոր գիտնական հայ վարդապետները, որոնց թվում Գրիգոր Վկայասերը՝ իր յողած մատենագրական վաստակով, և Ստեփանոս Մանուկ

<sup>12</sup> Ն. Ընորհապի, անդ, էջ 496:

<sup>13</sup> Ն. Ընորհապի, Մուլթ Սմինհանրական, ի և էջ միաւոր, 1865, էջ 150:

վարդապետը իր կենդանի դասախոսություններով:

Ընորհալին օժտված է և կել աստվածատոր, բացադիկ ու բազմակողմանի շնորհներով և ինքնակրթությամբ դարձել լուսավոր մի շահ, որը ճառագել է միջնադարում և իր լույսերով ողողել գալիք դարերը հայ մշակույթի միջն մեր օրերը: Նա ծավալել է եկեղեցական, մշակութային, մանկավարժական, հայրենասիրական բեղուն գործունեություն, ունեցել է անքանի, հրեշտակային վարք և իրավամբ դասվել է հայ եկեղեցու և հայ մշակույթի մեծ երախտավորների և սրբերի շարքը:

Ընորհալու գիտնականության համբավը դուրս է եկել Կիլիկիայի սահմաններից: Նա, որպես իր ժամանակի եկեղեցու ամենազարգացած վարդապետ, արդարորեն վայելել է մեծ գիտնականի համբավ:

Լամբրոնացին գրում է.

«Հըռչակ յաշխարհ՝ այս հասանի,  
Անոն յոյրուս երկրի գովի,  
Յարոնի իմաստն արտափայի  
Ախործելի բանքն լսի»<sup>14</sup>:

Կիրակոս Գանձակեցին վկայում է. «Այս ներսէս առանելեալ էր իմաստութեամբ քան զլուով ի ժամանակի անդ, ո՞չ միայն քան զվարդապետս հայոց, այլ և քան զՅունաց և զԱստրոց, այնքան՝ մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ամենայն ազգու»<sup>15</sup>:

Ասորիներն ու հույները ասում էին. «որպէս լուաք և նոյնպէս տեսաք, զի նոր ունի Գրիգոր աստուածաբան է յարուցեալ»<sup>16</sup>:

Իր կաթողիկոս եղբայրը զքաղվել է Ընորհալու կրթության և դաստիարակության հարցով: Ծովըում գրադարան է կազմել, և այնտեղ է հրավիրել ժամանակի աշխարհական և հոգնորական գիտնականներին.

«Զգիրըս ցըրուեալս ի մի ածէր,  
Սոքօք զԱթոռն արմատացնէր»:

Նաև՝ «Կրթէր և զեղբայրն ներսէս ի վարժումն իմաստից յաստուածայնոց տառից և կարգէր նմա դաստիարակս արս գիտնականս, սուրբ և առաքինիս, որոյ ընկալեալ ի նոցանէ զաերմն բանին հարիւրատը որպէս կրթէր արգաւանդ, պտղաբերէր... յո-

<sup>14</sup> Ներսէս Լամբրոնացի, Գովեստ Աերբայլական պատմագրական բանին յաղագ վարուց մեծի հայրապետին տեսան ներսիս..., Ընդհանրական, անդ, էջ 474:

<sup>15</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 118:

<sup>16</sup> Անդ:

բունց առարինեաց և գիտնոց վեհագոյն»<sup>17</sup>:

Ծովըում Ընորհալին «միշտ ընթերցմամբ պարապէր» և անա, շատ վաղ հասակում,

«Մինչև յարբուն հասուցեալ,  
Եւ քահանայ ձեռամբ օծեալ»<sup>18</sup>:

Գրիգոր Պահլավունին շուտով Ընորհալուն կուակրոն քահանա է ձեռնադրում և ի պատիվ Ներսէս Պարթևի՝ Վերանվանում Ներսէս: Մինչև այժմ հայտնի չէ Ընորհալու մկրտության կամ աշխարհական անունը:

Ընորհալին 17 տարեկան հասակում Կարմիր վանիցից տեղափոխում է Ծովը, որ անցնում են նրա երիտասարդական տարիները, որ նա անում է մտրով ու մարմնով և սկսում է ստեղծագործել: Ծովը դրակում Ընորհալին «ոչ ունելով մարմնական ինչ հանգիստ, այլ անդարձ ժուժկապութեամբ կրթութեան աղօթս, լընթերցումն Աստուածաշունչ տառից և միջու և յարակա ի նոյն ըննութիւն... Ուստի ընկալաւ զնորհս գիտութեան ի Հոգուն սրբոյ... մենքէր զնորագոյն իմաստս բանից սրբոց Գորոց, որով հրաշանային ընդ քաշակորով իմաստութիւնն ու դասք ընտրելոց վարդապետացեց որ զալու ժամանական էին»<sup>19</sup>:

Հաստ բանասերների 1121—1135 թվականներին Ընորհալու կյանքի ու գործունեության վրա իշել է «խորհրդավոր մի լույսուն»<sup>20</sup>: Այս տարիներին Ընորհալին զքաղվել է եկեղեցական-հայրենասիրական գործունեությամբ: Երկու եղբայրների ցանկությունն է եղել վերադառնալ Անի, հայրապետական Այրողը փոխադրել բուն Հայաստան և աշխատել վերականգնել հայկական իշխանությունը Անիում: Բայց, ի վերջո, Անիում հայկական իշխանության վերականգնեման և հայրապետական Այրողը այնտեղ վերահաստատելու հույսերը ընդմիջու խորտակվեցին, և երկու եղբայրները որոշեցին Այրողը փոխադրել մի այլ պահանվ տեղ՝ Հոռոմիլա:

Հավանական է, որ 1121—1135 թվականներին Ընորհալին այցելած լինի Անի, ապա բուն Հայաստան<sup>21</sup>, այս հարցերով զքաղվելու և մոտիկից ծանոթանալու հայ ժողովրդի կյանքին ու դրությանը: Իր կաթողիկության տարիներին Ընորհալին միշտ սերտ կապ է պահպանել ազգային-եկեղեցական

<sup>17</sup> Սոփերը Բայկականք, Վենետիկ, ԺԴ, 1859, էջ 32—38:

<sup>18</sup> Ն. Ընորհալի, Բանք չափա, էջ 558:

<sup>19</sup> Սոփերը Բայկականք, անդ, էջ 34—35:

<sup>20</sup> Գրիգոր Հակոբյան, Ներսէս Ընորհալի, Երևան, 1964, էջ 42—45:

<sup>21</sup> Անդ, էջ 44—45:

բոլոր հարցերում բուն Հայաստանի հշանական վարդերի և արևելյան վարդապետների մեջ:

Ծնորհալին անձամբ թղթակցել է բուն Հայաստանի հշանական վարդերի վարդապետների հետ դավանական, եկեղեցական, ազգային ու հայրենասիրական, գրական ու գիտական բազում խնդիրների շորոշ: «Թուղթ վարդապետացն հայոց հիմնային կողմանցն որ ի Հայրատ և ի Սահամին»<sup>22</sup> վերնագիրը կրող համակում Ծնորհալին այդ վաճերու անվանում է «մայրաքաղաք» և մեծարաքով է խոսում Գրիգոր Տուտերյան, Գևորգ վարդապետի, Խաչատոր Տարոնեցու, Միմիթար Գոշի մասին, «այօթս առևելյան վասն երկար կենաց և խաղաղութեան ձերոյ»,—գրում է նա:

Ծնորհալին 40 տարի որպես վարդապետ և եպիսկոպոս աշ բազուկն է հանդիսացել իր կաթողիկոս եղբոր, մինչև 1166 թվականը, երբ հաջորդել է նրան հայրապետական Ալքոնի վրա: Ունեցել է ընտիր և գեղեցիկ ձեռագիր և իր գոլոյցումներից շատերը նոյն հիմք ձեռության օրերին հեճն է գրել ու նկարել: Ծնորհալու արտագրած ձեռագիրերից մի քանիսը հասել են մեզ. «ձեռաց երկուք վաստակեցան, գիրոս գրել միշտ ճշգնեցաւ» (Լամբրոնացի): «Գրէր և շարժագրութիւն գրոյ, հրաշատեսակ և վայելու ի զանազան կերպս, որպէս աստուածային մատամք շարժահիսեալ... գիծք շնորհակիր և աստուածաներկ մատանցն, և քանք հոգեշարժք լեզուին արտաքրենալը ի յոգհամանար մտացն, օտար և գեր ի վերոյ երևենին մարմարանաց գիտութեանց և իրաց»<sup>23</sup>:

Երկու եղբայրներ հայրապետական Աթոռու 1150 թվականին Ծովքից փոխադրում են Հոռմիլա՝ «ի գետապատ քարանձախ, ի յեփրատայ պարագրելի, ի մարդկանէ ոչ զարիորի, զի է հնարից անյաղթելի, տեղ պատրատեալ ապահինի, սուրբ Աթոռոյն որպանելի» (Ծնորհալի, «Բան հաւատոյ», Յիշտակարան, էջ 242):

Հոռմիլայում 1173 թվականի օգոստոսի 13-ին, հինգաշրթի օրը, ծանրորեն տկարացած վերջին չերմախտից, մահանում է Ծնորհալին 72 տարեկան հասակում և թաղվում Հոռմիլայում իր եղբոր գերեզմանի մոտ:

Այս պատճառով Ծնորհալին կոչվում է նաև Կրայեցի:

Ծնորհալին,—գրում է Աքեղյանը,—«հայոց եկեղեցու մեծ հայրերից է, խկացես քաղմակողմանի, բնատուր ձիրքերով օժոր-

ված բանատեղծ-երաժիշտ, շնորհալի մի անձ, ոչ միայն իր բազմազան գրական ընդունակությամբ, այլ նաև իր կանքով: Ուստի և հրա անվան հետ անբաժանելի է մնացել Ծնորհալի մակդիրը: Նա շատ բեղմնավոր է եղել իր գրական վաստակով և առանձնապես իր չափած քերթվածներով ու երգերով. դրանց համար էլ նա կոչվել է նաև երգող»... Ծերության օրերին անգամ նա չի դադարել բանատեղծելուց<sup>24</sup>:

Ծորց 52 տարի (1121—1173), ավելի քանի կես դար, անխափան և անխարդախ նվիրում եկեղեցուն, ծողովրդին և մեր դպրությանը:

Դժվար է Ծնորհալու նախորդների, իր ժամանակակիցների և իր հետնորդների մեջ գտնել մեկը, որ իր նկարագրի բրուելային մաքրությամբ, իր առաքինազարդ վարքով, իր ծովամատուց գիտությամբ, աստվածատուր շնորհներով, քրիստոնակալ իր հոգու քաղցրությամբ հավասարվեր նրան:

Ծնորհալին հավատքով ու հայեցնասիրությամբ լուսակերտված միաձուլլ մի մեծություն էր: Անուշ ու նորը՝ ինչպես իր քնարը, հանդարտ՝ ինչպես իր նկարագիրը, վճիռ՝ ինչպես իր սիրու, իր էության ցոլը, իր հոգու խաղաղության ծաղիկը:

Հիսուսանման ներդայստություն, կրօնական հանդուրժողություն ու լայնասրտություն: Աստվածային ուրախությամբ բարախող սիրու, որը վառվելով չերմացնում էր մեր եկեղեցին և ծողովորդը պանդիտության մեջ:

Սրբության ու առաքինության դյուցազն... լուսեղեն հոգու մշտամախտ թղթում և անվերապահ նվիրում: Լոյսի երգիչ, որ իր թրոռուն սրտով ու քնարչանքով հանդիսացավ շահակիրը հայ միջնադարյան վերանոնչյան:

### Ս. Ներսես Ծնորհալին և եկեղեցական միության հարցը

Ժամանակաշրջանը, որը ապրում ենք, ընդհանուր եկեղեցու պատմության մեջ հատկանշվում է Էկումենիզմով և Էկումենիկ շարժման աշխուժացումով:

Բայր և շարժում շատ հին են:

Բոլոր այն ջանքերը, հանդիպումները, բանակցությունները, թղթակցությունները, որոնք դարերի ընթացքում կատարվեցին վերականգնելու համար Գրիսոսի սուրբ, առաքելական եկեղեցու ընդհանրականությունն ու մեկությունը, մտնում են Էկումենիկ շարժման պատմության մեջ:

<sup>22</sup> Ն. Ծնորհալի, Ըստիանուական, էջ 426:  
<sup>23</sup> Սովորը հայկական, անդ, էջ 85:

451 թվին գումարված Քաղկեդոնի ժողովը պատակտեց Քրիստոսի տիեզերական եկեղեցու ընդհանրականությունն ու միությունը, մեկությունը, և ստեղծվեցին քրիստոնության ծոցում երկու մեծ եկեղեցական բաժանումներ՝ կամ խմբավորումներ, քաղկեդոնական և հայկարդկեդոնական, կամ այսորվա ավելի մեջ արտահայտությամբ, քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական եկեղեցիներ:

Քաղկեդոնական եկեղեցիների խմբավորման մեջ են մտնում կաթոլիկ, բողոք օրթոդոքս, նաև ոռուական եկեղեցիները:

Ոչ քաղկեդոնական եկեղեցիներն են հայ, եթովպական, դպտական, ասորի և հնդիկ մալարար եկեղեցիները:

Հայ եկեղեցին մինչև ս. Ներսես Շնորհալի իր ետին ուներ մանավանդ հովաների հետ միշելեցինեցական հարաբերությունների 700 տարվա փշոտ, ցավալի և բուռն պայքարի պատմություն:

Հայ եկեղեցու, նրա մեծ դավանարանների և հայրապետությունների համար քաղկեդոնի դեմ Ե դարի Կեսերից մղված դավանարանական պայքարը, որի պատմությամբ հարուստ է մեր մատենագրությունն ու մշակույթի տարեգրությունը, «մաքառման, ազգային պայքարի մի գործ էր ոչ միայն ի պաշտպանություն հայ եկեղեցու ուղղափառության, այլ նաև մեր ժողովորի ազգային ինքնուրության պահպանման»<sup>25</sup>:

Այդ դավանարանական գրվածքներով հայ եկեղեցին 480-ական թվականներից, Հովհանն Մանդակունու օրերից, վճռականունեն և մեկ անգամ ընդմիշտ ճշտել է իր դիրքը դավանական հարցերում, դիրք, որից հայրերեք չի շեղվել հետագայում:

Հայ և հուն եկեղեցիների միության հարցը մի անգամ ևս ավելի ստիպողական և կազմակերպված ձևերով ներկայանում է Շնորհալու ժամանակ:

Դա անշուշտ ուներ իր պատմական քաղաքական պատճառները:

Սեւլով թորքերը, որոնք հաստատվել էին արդեն Փոքր Ասիայում և հիմնել Խոկ-Շիայում-Գոնհայում մասնավոր մի սովորանություն (1074—1294), Եգիպտոսի մամլուքները մյուս կողմից, Կիլիկիայում հաստատված խաչակիր իշխանները նույնակեն թակում էին Բյուզանդական Կապրության արևելյան դարպանները: Կիլիկիայում ստեղծված հայկական նորակազմ իշխանությունն էլ երբեք հաճելի չէր հուներին ինչպես տեսանք: Վտանգը իրական էր ու լուրջ:

<sup>25</sup> Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 80:

Եվ անա Շնորհալու ժամանակ Կիր Լոմանվել կայսրը կրոնական-եկեղեցական թափանցիկ բոլի տակ, բայց քաղաքական Շկատառումներով, 1160-ական թվականներին առաջ էր քաշում «մի հօտ և մի հովի» լինելու անհրաժեշտությունը: Կայսեր հետապնդած քաղաքական նպատակն էր մեկ կայսրություն՝ բյուզանդականը, մեկ օրթոդոքս եկեղեցի, և մեկ դավանություն՝ քաղկեդոնականը:

Կայսրը այս ոգով և ամենայն վճռականությամբ պաշտոնապես եկեղեցիների միության հարցը դրեց Գրիգոր Գ Պահլավունու և Շնորհալու առաջ:

Նա այս առթիվ Գրիգոր Գ Պահլավունուն և Շնորհալուն գրած իր պաշտոնական նամակում շեշտում էր.

«Պահր է ամեննեցուն՝ որք ի ձեռն ասուածային մկրտութեանն զՔրիստոս զգեցեալ են..... և մերձ են յամբիծ հաւատս... մի հօտ լինեցին ամենայն քրիստոնեաց և ի միություն հովուապետէ ուսանեցին... և միուլ գաւազանաւ հաւատոյ՝ հովուին ի միասին..... և մի փարախու ուղղափառ եկեղեցոյ տաւալեսցին»<sup>26</sup>:

Կ. Պոլսում «աստուածային եկեղեցոյ խաղաղութիւնն» ավելի կարևոր էին համարում, «քան զրոյոր հոռմանեցոց տիեզերականութեանն յաղթութիւն»<sup>27</sup>:

Այսուեղ ամեն բան ասված է եկեղեցիների միության թափանցիկ շղարշի տակ, հունական պետական ու գաղափարախոսական գերիշխանությունը փոքր եկեղեցիների և ժողովուրդների վրա հաստատելու վճռականությամբ:

Կայսեր առաջարկած միությունը իր խորքում նպատակ ուներ խարիսկելու Կիլիկիայում նաև նորահաստատ հայ ազգային պետականության հիմքերը և վճռակար էր մեր եկեղեցու ինքնուրույնության և դարպան գոյության, որոնց շերմ պաշտպանն էր Շնորհալին:

Այս իմաստով պատմական ու նաև այժմեական մեծ նշանակություն ունեն եկեղեցական միության հարցում Շնորհալու գրած 7—8 թթերն ու այլ գրվածքները, որոնցում հաստակորեն նաև ճշտել է իր դիրքը և սահմանել իր սկզբունքները միության հարցում հանուն հայ եկեղեցու: Շնորհալու այդ դիրքը և սկզբունքները անփոփոխ պահպել են մինչև այսօր: Եվ երբ հայ եկեղեցու առաջ հետագայում դրվել է եկեղեցիների միության հարցը, մեր հայրապետներն ու վարդապետները առաջնորդվել են Շնորհալու ոգով:

Շնորհալու ժամանակ, 1165 թվականին,

<sup>26</sup> Ն. Շնորհալի, Ընդհանրական, էջ 145:

<sup>27</sup> Անդ, էջ 210:

առիթը ներկայացավ ուղարկի բանակցությունների մեջ մտնելու հույսների մետք: 1164 թվականին վեճ ծագեց Շորինյան Թորոս և Լամբրոնի տեր հունաստեր Օշին իշխանի միջև: Շնորհապին հաշտարարի դեր կատարեց և ամրանեց կիլիկյան հայ պետականության հիմքերը և կենտրոնականությունը հայ իշխաններին համախմբեց ազգային կենտրոնական իշխանության դրոշը ներք:

Դեայի Հոռոմկա իր ճանապարհին Շնորհալին այցելեց Մամետահի, որը հանդիպեց քաղաքի կառավարիչ Ալեքս իշխանին, որը դաստիարակվել էր և տոգորվել իր աներ Կիր Էմմանվել կայսեր քաղաքական դավանաբերություն:

Հանդիպման և խոսակցության ժամանակ Ալեքսը կայսեր կողմից Շնորհալուն է ներկայացնում նախապետ կազմված գրավոր մի հարցարան, որը կային դավանական ու ծիսական ծանր մեղադրանքներ հայ եկեղեցու հասցեին:

Շնորհալին հետևողականորեն և հավատարիմ Հայոց Հայապետների պահանջությանը, համարձակորեն պաշտպանում է հայ եկեղեցու դավանական դիրքը և ծիսական-պաշտամունքային կարգ ու սարքը և չի գիշում ոչ մի հարցում:

Ալեքս իշխանի խնդրանքի վրա Շնորհալին գրի է առնում իր առաջին թուղթը, որը կոչվում է «Գիր խոստովանութեան հաւատոյ Հայատանեայց եկեղեցոյ»<sup>28</sup>, որը նա Ալերկայացնում է հանգանանորեն և վճռական կերպով հայ եկեղեցու դավանությունը Աստվածաշնչի, առարելական, եկեղեցական ավանդության, երեք տիեզերական ժողովների և եկեղեցու ուղղայիտ հայրերի քրիստոնարանական գրվածքների հիման վրա:

Ալենութեան հույսների երեսին է տախի, որ «Քրիստոսի եկեղեցու տիեզերական խաղաղությունը» վրովով է կրօնական Անդմբության, նախանձի և հետի—«Եկեղեցեալ անքարտանութեան» և «քրոնութեան» պատճառավ, որոնց հետևանքով էլ «մինչն ցայժմ» հային վուն է «երկուցունց կողմանցն սուրբ հաստոյ» կարգը<sup>29</sup>:

Հորդորելով հույսներին, որ խոնարհության օրինակ վերցնեն Քրիստոսից, Շնորհալին հստակորեն նշում է, որ եկեղեցիների միությունը գլուխ չի կարող գալ «ո՛չ թագաւորական ահարկու զօրութեամբ, այլ՝ քաղցրագոյն խոնարհութեամբ»<sup>30</sup>, որովհետև, գրում է, «եօթն հարիս ամ աւելի եղելոյ ժամա-

նակաց բաժանման ի միմետաց անդամոց Քրիստոսի», տարիներ, որոնց ընթացքում ամել, խորացել է «ատելուրյան ախտը» և նրանց ծնվող «քշնամությունն ու հայինյանը» դարձել են հիվանդություն և «երկրորդ բնութիւն հնացեալ սովորութեամբքն», ծանր մի վիճակ, որը «կարոտ է բազում հոգևոր թշկական հիոց օծմանց»<sup>31</sup>:

Հիանալի է Շնորհալու համարձակությունը: Անցանոյ 700 տարիների ընթացքում, ասում է հոյներին, վիրավորեցիք մեր ազգային արժանապատվությունը, արհամարինցիք մեր հավատքն ու ավանդությունները, որոնց հետևանքները եղան հայերի համար «աւերումն եկեղեցեաց և սեղանոյ Աստուծոյ կործանումն և հշանաց Քրիստոսի խորտակումն և բազում նեղութիւնք պաշտօնելից և պէսպէս զրպարտութիւնք, որպէս և ո՛չ ի մէջ թշնամեաց Քրիստոսի՝ յորս մերձ եմք, զի այսպիսի գործ՝ ո՛չ միայն և զրաժանեալսն ո՛չ միառորէ, այլ զմիառորեալսն պառկուտ միմեանց»<sup>32</sup>:

Ի՞նչ է հարկավոր ատելության և բոնության բյուզանդական այդ ախտը բուժելու համար. սեր, խաղաղություն, նեղություն, հանդուժողություն և այդ ոգով քննություն՝ վիճելի հարցերի, «ո՛չ հակառակութեամբ, և անօգուտ բանակությունները, որպէս մինչև ցայծն, յորց ոչինչ օգտեցաւ եկեղեցին»: Նաևնք բանակցությունների սեղանի շորշ, ասում է Շնորհալին, «եթէ տնօրինեսցէ Աստուած խօսիլ մեզ առ միմեանս, մի՛ եղիցի որպէս տեառն առ ծառայս և ծառայց առ տեարս... այլ հաւասար ընդ հաւասար»<sup>33</sup>:

Բանակցությունների ժամանակ մեջտեղ դնենք Աստվածաշնչը, առաքելական ու եկեղեցական ավանդությունները, և. Հարց գրվածքները և ինչ դուրս է աստվածադիր այդ կանոններից, «եթէ ի դաւանութիւն հաւատոյ և եթէ յաւանդութիւնս եկեղեցոյ» վերացնենք մեջտեղից, հրաժարվենք այդ բույրից և միմյանց չմեջադրենք և պակասը, թերին լրացնենք «միաբանական սիրով», որով և հասկանալի կինչի՝ եկեղեցիների միության այս շարժումը «աստուածային է թէ մարդկային»<sup>34</sup>:

Շնորհալու «Հայատոյ» այս առաջին գիրը մեծ հետաքրքրություն է առաջացնում Կ. Պոլսի արքունիքում և հունաց պատրիարքարանում:

«Ամենայն դասք եկեղեցականացն և ամե-

<sup>28</sup> Անդ, էջ 117, 148:

<sup>29</sup> Անդ, էջ 158:

<sup>30</sup> Անդ, էջ 154:

<sup>31</sup> Անդ:

<sup>32</sup> Անդ, էջ 155:

<sup>33</sup> Անդ, էջ 159:

<sup>34</sup> Անդ:

նայն թագաւորագարմբ մեծի պալատանն, ...յայսկու, յանձնոյս ընթանային առ միմեան ասելով, տեսէք զկաթողիկոսին հայոց խոհական ճարտարութեանն հանձար նայեցարուք ընդ շափու ուղիղ խոստվանութեանն ընդ որ գնայ երանելին բովանդակ զարմին. փառ Աստուծոյ որ տեսանեմք առաջնորդ եկեղեցոյ այսպիսի ի նուազեալս ժամանակի<sup>35</sup>:

Այս թղթի հիման վրա կայսրը Ծնորհալուն հրավիրում է Կ. Պոլիս՝ միության հարցը վերջնականորեն լուծելու և վճռելու համար:

Ծնորհային մերժում է կայսերական հրավերը եղբոր հիվանդության, ապա մահվան և ժամանակի խառնակության պատճառով և կայսրին հրավիրում է Հոռոմլան:

Այսուհետև բանակցությունները շարունակվում են երկուստեք թղթակցություններով և Հոռոմլայում երկու եկեղեցիների մերկայացուցիչների վիճաբանություններով:

Այս առջիկ Ծնորհալին գրում է կայսեր խնդրանքով իր երկրորդ նշանավոր հավատ թուղթը՝ «Սահմանը հաւատոյ Հայատանեաց եկեղեցոյ», և ապա՝ երրորդ՝ «Յաղագս աւանդութեանց եկեղեցոյ»<sup>36</sup> թուղթը, ըստ Օրմանյանի՝ «երկրորդեղով «Գիր խոստվանութեան»-ի մեջ իր կամնական առաջն թղթի գրածը»: Երկրորդ թուղթը իր ամբողջության մեջ տարբերություն չուներ առաջինից:

Այս առջիկ Օրմանյան սրբազնը անում է հետևյալ ճշգրիտ եզրակացությունը.

«Առաջին գիրը պարզ եպիսկոպոսի մը հեղինակությունն ուներ, Մանվել պետք կզգար կաթողիկոսին ստորագրությամբ հաստափած հիմնագիր մը ունենալ..., Ներսես կպարտավորվեր տալ և իրքն եպիսկոպոս գրածը իրքն կաթողիկոս վավերացնել»<sup>37</sup>:

Հավատու սույն երկրորդ թղթում Ծնորհալին ամփոփում էր հայ եկեղեցու ծիսակատարության կամ ավանդության վերաբերյալ բոլոր կետերը՝ պաշտպանելով անապակ բաժակով ու բաղարջ հացով պատարագելը, ծնունդն ու մկրտությունը հունարի Յ-ին միասին կատարելը, «Որ Աստուծ»-ը «Որ խաչեցարով» երգելը և այլն:

«Եին և այլես յոլովագոյն պատճառը յայնագս արդարացուցանելոյ զմերս առանդութին», — գրում է Ծնորհալին և ասում, որ հայերը ոչ թե «հնքանահանութեամբ» բաժանվեցին այլ ազգերից այսպես տոնելով, «այլ՝

այլը զմերս ունելով յառաջագոյն, փոխեցին որպես կանեցան, զոր այժմ ունին»<sup>38</sup>:

Իմաստես դավանական հարցերում, այնպէս էլ մեր եկեղեցու ծիսական կարգն ու ավանդությունները պահելու հարցում «Ծնորհալին բարձրաբարբար բարողին է հայ եկեղեցին մերժամիտ և լայնախոհ տեսութեան, որ եկեղեցին միությունը կըմբռնե հիմնական կետերու համաձայնության և փոխադրա հոգևոր հաղորդակցության մեջ և կըմեծն սիրավանության և սորվարար նախնողության ամեն պահանջները որոնց վրա հաստատած են հովն և լատին եկեղեցիներ միության անհրաժեշտ պայմանները»<sup>39</sup>:

Այս բոլորից մետք Ծնորհալու քրիստոնածավալը ու բարի հոգին վորովվեց, փշրովեց, երբ իրը պատասխան իր երեք թղթերի, ընդունեց հովների 9 գլուխ առաջարկները, որպես պայման եկեղեցական միության, առաջարկները, որոնց նպատակն էր դավանական, ծիսական ու վարչական հողի վրա վերացնել հայ եկեղեցու անկախությունն ու հերեագլուխությունը: «Ո՞չ գիտէք, որոյ հոգով էք դուք», — մտածում էր Ծնորհալին:

Կայսրը, Միքայել պատրիարքը և հովների Սինոդը այսպես էր հասկանում հայ-հովն եկեղեցական միության հարցը:

«Միուրք իսկ անցնելիք բան չէր, որ Ներսես և հայեր կարենային այդ պայմաններու ներք միաբանություն կնքել և առաջարկյալ գոլիմները ընդունիլ... Ծնորհալի Հայրապետը երբեք իր շնորհալի կերպերը ձեռքն ըրթունով» վերջին անգամ լինելով պատասխանում է հովներին, թե ինքը «առանց ազգային ծողովի և արևելյան եպիսկոպությունու և վարդապետներու հետ համաձայնության, պատասխան չէր կրնար տալ»<sup>40</sup>, որովհետև, գրում էր նա վերջին անգամ լինելով Կ. Պոլիս, կայսրին և պատրիարքին, թե «աւանդութիւնն եկեղեցոյ մեր զոր ունիմք, ի վկասութենէ Աստուծացունց գրոց հաստատեալ է», թե հայ եկեղեցու ուղղափառությունը «ի հարց, անոնի հջանել» և հայ եկեղեցին «ոչ իրը ի մոլորութենէ դառնալով ի հշմարտութիւն» և թե մեր հայրապետական Աթոռը գտնվում է հայրենիքից դուրս, օտարության մեջ, «ի մեջ ալլասենից, և աշխարհ մեր յանօրինաց ի ստրկութիւն մատնեցա, սակայն հիմն հաստատութեան մեր նոքա են (արևելյան վարդապետները) և գլխոյն (իրնե՛ն Ծնորհալուն) անհնար է առանց անդամոցն գործոյ իրիք կատարումն առնելու»<sup>41</sup>:

<sup>35</sup> Անդ, էջ 210:

<sup>36</sup> Անդ, էջ 163:

<sup>37</sup> Մ. արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1416:

<sup>38</sup> Ն. Ծնորհալի, Ընդհանրական, էջ 219:

Այսպես ջուրն ընկալի եկեղեցական միության հարցը: Օրմանյան սրբազնը, իրեն և հասուկ օրմանյանական ընդգրկման և ծավալու խորածականությամբ ու թափով, քննության առնելով Ընորհալու օրով եկեղեցական միության ի նպատա թափած շանքերը, եզրակացնում է. Ընորհալու չարտի կակիծով կնկատեք քրիստոնեության անշատումները և անոր գործնական վճառելով կտեսներ իր աշքին առջև Հոռմկայի դիտանցեն, որուն ասորությ հովաներ և լատին և հայեր անհաջող կերպով իրարու դեմ կմրցեն և իրարու վճառելու և իրար կործանելու կաշխատեն: Ներսես, վեհ ու բարձր ձը զգացումներով վասված սիրու մը քրիստոնեական միավորությունը իր միայնան կնկատեք այդ չարիքին...

Ներսես չէր ընդուներ եկեղեցի մը՝ տեր, որ հրամայե, և եկեղեցի մը ծառա, որ հնագանդի, եկեղեցի մը որ ինքզինքը ուղղության կանոն կարծե և եկեղեցի մը, որ մյուսը ընդորինակելու պարտավորվի...: Ներսեսի տեսությամբ պեսք չէր որ եկեղեցիներեն ոչ մին քրիստոնեությունը իր իր սեփական ստացությունը ընբռներ և ոչ ալ իր դրությունը իր ամենուն պարտավորիչ առաջարկեր, այլ ճշմարտությունը պիտի հաստատվեր մասերու միավորության մեջ:

Այս դրությունը իսկապես և տիրապես հայադպան եկեղեցու սկզբունքն է, որուն ո՛չ հունադպանը կմոտենա և ո՛չ ալ հոռմատավանը կիավանի. բայց ներսես իր քրիստության մեջ կկարծեր թե հնարավոր է զանոնք համոզել...

Ներսեսի զգացած միութենական ձգությունը, ճշմարիտ քրիստոնեական անկախ զգացումն էր, զոտ հայադպանություն էր, և չենք գիտեր թե ինչպես անոր մեջ ոմանք հունադպանություն տեսան և ոմանք ալ՝ հոռմատավանություն գտան... Ներսես անկեղծ և ճշմարիտ և բոլորանվեր փափաքող մըն էր, որ Քրիստոսի եկեղեցին պառակտող քաժանումը վերացվեր և իրարու դեմ մրցող չորս ճյուղերը Հայու ու Աստիճան, Հոյու ու Լատիճը դադարին իրարու դեմ պաթարելի... և իրարու համաձայնեն էական և դպասական կետերու մեջ, մոքի և ուղղության համաձայնությամբ, բանաձներն ու բացատրությունները ազատ ուղղով լուրաքանչյուրին, բայց իրար հանդեպ միշտ սեր ունենան:

Ընորհալու իր միութենական ձգութումն մեջ, քրիստոնեական և ավետարանական սկզբունքներուն մետ՝ ազգափրական և քաղաքագիտական զգացումներ ալ ուներ և իր տառապայա և վարառական հայ ազգին համար իսկական օգնություն և զորություն ո՞յ կինտրեր, քրիստոնյաներու համե-

րաշին միության մեջ, աշխարհին մեջ խաղաղություն, բարօրություն և ապահովություն կփափարեր հայրապետ իր վշտակիր հոսին:

Մենք չպիտի վարակներ հոչակել Ընորհալուն իր հայ եկեղեցը անկեղծ ախտան և հայադպան դրության ճշմարիտ ներկայացուցիչ, որ ավելի ճշությամբ գիտցած է գծել և ճշտել մեր ազգային եկեղեցւույն ուղղությունը»<sup>42</sup>:

Ամենայն ինչ ասվել է պատեղ հրաշալորեն Ընորհալու միութենական ձգութմների և ջանքերի տրամարանական, ճիշտ ու հայեցի մեկնարանությամբ: Ընորհալու գծած ազգային այդ ուղղությունից հետագայում երբեք չի շեղվել հայ եկեղեցին:

Ի՞նչ է այսօր Ընորհալու պատգամը, դասը մեզ, իր մահվան 800-ամյակի առիթով:

Ընորհալու օրով հայ և մյուս եկեղեցիների միջն գոյություն ուներ միշտեկեղեցական հարաբերությունների վշտու, ցավալի պատմության 700 տարիներ, իսկ այսօր՝ 1500 տարիների տիսոր պատմություն ունի այդ հարաբերությունը:

Բայց ժամանակները փոխվել են. փոխվում են նաև շատ մտավորություններ: Կյանքը, հասարակությունը մշտական շարժման ու փոփոխման օրենքով է ընթանում:

Ժամանակաշրջանը, ուր ապրում ենք, էկումենիկ շարժման դարս է:

Հայ եկեղեցին, Մայր Աթոռոյի գլխավորությամբ, անդամ է Եկեղեցիների համաշխարհային խորհրդին և ակտիվուն մասնակցում է միշտեկեղեցական հարաբերությունների համաժողովներին:

Այս առժիվ երախտագիտությամբ պեսք է արձանագրել Հայոց Հայրապետի, մեր օրերի Վազգեն Ա Ընորհալու՝ Եկեղեցիների միության մասին գրած 1965 թվականի հունիսի 4 սրբատառ կոնդակի հետևյալ մրտքերը, կոնդակ, որը գրվել է ներսես Ընորհալու եկեղեցիների միության սկզբունքներով և օրմանյանական թափով և համոզմունքով...:

«Եկեղեցին, իբրև աստվածային նախախնամության գործ, անշուշտ մեկ է և տիեզերական, սակայն այդ աստվածային տօնության իրագործումը երկրի վրա զգեցած է և կզգենու արտաքին տարրեր տարագներ, համաձայն ժողովորդներու հոգեկան դիմագծության և Սաստուծ խոսքը ընկալելու և ապրելու կերպին, և համաձայն պատմական իրադրությանց ու ավանդություններուն, որոնց մեջ ծնած ու աճած են եկեղեցիները:

<sup>42</sup> Մ. արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1413, 1414, 1442, 1443:

Այս երկու հազար տարիներու ընթացքին, քրիստոնեությունը, եկեղեցիները հաճախ կուրծ տված են արտաքին պեկոծումներու և ներքին հակամարտություններու և պառակտումներու, և երբեմն նույնիսկ թշնամական փոխադարձ գործողություններու, սակայն, Աստուծո ողորմությամբ, անոնք կարողացած են հասնել խաղաղության ափին, շարունակելով իրենց պրազան տաքելությունը, ամեն մենք իրեն սահմանված հույսն մեջ:

Մեր օրերուն, փառք Ամենակալին, այլև չկան ոչքարեկամական դրսնորումներ եկեղեցիներու միջև: Այլևս ոչ ոք չի մտածեր հին վեճներու և հակառակություններու մասին: Այսօր բոլոր եկեղեցիները, բոլոր քրիստոնյաները կիսուին փոխադարձ հաճության մասին, գործակցության մասին, միության մասին:

Հայաստանյաց առաքելական ս. եկեղեցին, դավանարանական հարցերու նկատմամբ իր մտածելակերպով ու բանաձևումներով թեև կմնա անշեղ ու հաստատ իր ավանդական ուղղափառ դիրքերուն վրա, սակայն, ինչպես անցյալի մեջ, այսօր ալ կառաջնորդվի «Միութիւն ի կարևոր և ազատութիւն յերկրայական» հին ու բարերար սկզբունքով: Ուրեմն հույժ ցանկալի է, որ քույր եկեղեցիներու հետ մենք շարունակենք պահպանել ու մշակել իրավ քրիստոնեական եղբայրական կապեր, մեր մայր եկեղեցին և մեր լուսաբնակ հայրապետներու ոգիով, եկեղեցիներու միջն միությունը տեսնելով ի Քրիստոս սիրո մեջ, փոխադարձ ճանաչման ու գնահատման մեջ, սերս գործակցության մեջ:

Դավանարանական, քրիստոսաբանական կամ այլ հներիներ այլևս արգելք չեն և ոչ ալ պայման՝ եկեղեցիներու սիրայիր հարաբերությանց ու եղբայրական գործակցությանց: Դավանարանական դիրքերու վերաբննության ու միակերպութիւն ճանապարհով միութենական փորձերը տակավին կանխահաս են: Այսօր նման փորձեր կրնան դուռ բանալ նոր վեճերու, նոր անհասկացողություններու և իրարամերծ դրսնորումներու: Հիշենք, որ անցյալի մեջ հաճախ, միության մասին մարդոց տեսակետներն են եղած քրիստոնեական ճշմարիտ սիրո և միության ոգին խափանողը:

Վերաբնել ու փոփոխել տասնյակ մը և ավելի դարերու հողովույցով հաստատված կանոններ ու դավանարանական բանաձեռնություններ ու ծխական կերպեր, վատահորեն շփոթություն և դժգոհություն պիտի հառաջացնե հավատացյալ ժողովորդի գիտակցության մեջ, և

տկարացում սիրո և հավատարմության՝ դեպի մայր եկեղեցին, և հետևաբար քրիստոնեական հավատքի տկարացում ժողովորդի նոգերանության մեջ, ի մասնավորի ազգային եկեղեցիներու պարագային:

Մեր եկեղեցվլ ծագման, կազմավորման ու զարգացման պատմության ու ավանդություններուն և մեր ժողովորդին հատուկ՝ կրոնական ապրումներու դրսնորման կերպերուն մեջ մենք կգտնենք մեր ազգային եկեղեցին քրիստոնեական հարազատությունը և վավերականությունը:

Ազգի մը բազմադարյան կյանքի փորձով մարմին առած ու կյանքի ձև ստացած ավանդությունները, նոգերանությունը և ստավածարանական մտածելակերպը շատ ավելի զորավոր են ու վավերական, քան տեսական մենայությունները, ինչքան ալ տրամարանական թվին անոնք վերացական մտածումի առջև:

Հայ եկեղեցին չի կրնար անտեսել նաև իր գոյության ու իր առաքելության ազգային նկարագիրը: Մանավանդ ի սիյուս աշխարհի ցրված հայ ժողովորդի համար, հայ եկեղեցին իր ինքնուրույն դավանարանությամբ, ավանդություններով, իր ազգային լեզվով ու ծեսերով, իր անկախ ու ժողովրդապետական կազմակերպությամբ, ազգապահպանման հզոր ազդակ և ինքնապաշտպանության ամուր վահան կհանդիսանա պայօռ, երբ մեր ժողովորդի ավելի քան կեսը և մեր նվիրապետական պատմական Աթոռներու չորսեն երեքը կգտնվին մայր հայութենիքի սահմաններն որուր:

Հետևաբար եկեղեցիներու միությունը Մենք կը դանենք իրականացած տեսնել հավատալով, թե Քրիստոսվ և ս. Ավետարանով մեկ է եկեղեցին, և թե պատմական ազգային եկեղեցիներու գոյությունը, այնպէս ինչպես անոնք կամ պայօռ, չի հակասեր և չի ժիտեր Քրիստոսվ մեկությունը ընդհանրական եկեղեցիին:

Մեր օրերուն, եկեղեցիներու միության գաղափարը և առաջադրանքը պետք է բանաձեռ ի հերք միություն մը Քրիստոսի սիրույն մեջ, եղբայրական հարաբերությանց մշակումով ու սերտ գործակցությամբ, փոխադարձ հանդուժողության, հարգանքի ու հավասարության պայմաններու մեջ, ամեն եկեղեցի պամելով իր դավանարանական մտածելակերպը, իր ավանդությունները և իր ինքնագլուխ անկախ դեկապարությունը:

Եկեղեցիներու միության գաղափարը, մեր դարշարջանին համար, օգտակար ձևով և բավարար չափով իրագործված է եկեղեցիների համաշխարհային խորհուրդի շարժման հիմնական սկզբունքներով, որոնք բա-

նաձևեցան 1961-ին, Դեհլիի համագումարում: Ամենք նոգեպես միխթարված ըլլալու ենք, եթե աշխարհի բոլոր քրիստոնյան եկեղեցիները, առանց խորության, անկեղծորեն միանան և հավասար հողինակությամբ եղբայրաբար գործակցին, մեր օրերուն՝ քրիստոնյան եկեղեցիները և համայնքայի կարդինալները հոգող կենսական հարցերու լուծման ճանապարհին: Եթե մեր սերունդը այդ իրականացնե, արդեն պատմական մեծ հաջողություն մը արձանագրուած պիտի ըլլա Քրիստոսի մի և ընդհանրական ս. եկեղեցին:

...Բոլոր պատմական եկեղեցիներու իմացության, ներշնչումի և ապրումի բյուրեղացած, առարկայացած այդ արտահայտությունները կկազմեն այն համաքրիստոնեական, տիեզերական գանձարանը, որ իր ամբողջությամբ միան, իր այլազանությամբ ու բազմերանգությամբ, նոյնին երեմն իր հակասություններով, կարտահայտելիությամբ ամեն առաջեցները Աստուծո խոսքն և կճառագայթել փառքը Քրիստոսին, մտածումի տարրեր ձևերով, զգացումի տարրեր երանգներով, տարրեր լեզուներով, տարրեր դաշնավորումներով:

Պատմականորեն զարգացած ամեն քրիստոնեական եկեղեցի իր սուրբերով, իր դա-

վանությամբ, իր պահանջություններով, իր գրականությամբ և իր արվեստով, որույն և անկրկնելի ապրող հուշարձան մըն է, կենդանի խոսք մըն է, վավերական վկայություն մըն է՝ «վասն մեծի փառացն Աստուծոյ»:

Դեռք է սրբությամբ պատել, պահպանել զամոնք ամրոց, անհատն ու անալլայլ, առանց հոգու մը իսկ ավելցնելու կամ պակասեցնելու: Դեռք չէ աղքատացնել, պետք չէ տիկարացնել, պետք չէ գունազերծել Քրիստոսի եկեղեցին:

Ինչքա՞ն իրավ ավետարանական հոգի կա, ինչքա՞ն մարդկային ճշմարտություն և ինչքա՞ն ողջմտություն մեր երանաշնորհ Խրիմյան Հայոցի բոլորին ծանոթ այն պարզ ու վճիռ պատկերին մեջ, որով քրիստոնեական եկեղեցիները կնմանցներ մեծ ծաղկեփունչի մը, որը ամեն մեկ ծաղիկ իր ուրույն գոյնը ունի, իր ուրույն երանգը և իր ուրույն բոյրը, բոլոր մեկտեղված Քրիստոսի սիրո կապով:

Այսօր, եթե կա բան մը, որ մենք՝ քրիստոնյաներս և աշխարհի եկեղեցիները պետք է իրոք փնտրենք՝ այդ Քրիստոսի սերն է»<sup>43</sup>:  
(Ծարումակելի)



<sup>43</sup> Վազգեն Ա. Հայրապետ Հայոց, գիրք երկրորդ, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1968, էջ 34—38: